ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 հունիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

79
(2929)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՌԻՍԿԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ

Մինչ քաղաքական դաշտը կենտրոնացել է «Սրբազան շարժման» վրա, այլ ոլորտներում աղետալի վիճակ է: ԱԺ-ում 2023 թ. բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ պարզվեց, որ պետությունը բուժհաստատություններին պետպատվերի դիմաց մոտ 3 մլրդ դրամ պարտք ունի: Նաեւ սա է եղել պատճառը, որ ժամանակին մի շարք բուժհաստատություններ չեն կարողացել վճարել իրենց աշխատակիցների աշխատավարձերը, որովհետեւ պարզապես չեն ֆինանսավորվել. իսկ չեն ֆինանսավորվել, որովհետեւ Նիկոլ Փաշինյանն ու Անահիտ Ավանեսյանը, հանուն սեփական PR-ի, որոշել են պետպատվերի ծրագրում փոփոխություններ կատարել՝ առանց հնարավորություններն ու ռիսկերը հաշվի առնելու:

Նախկին նախարար Արսեն Թորոսյանը, օրինակ, ԱԺ-ում հարցրեց ֆինանսների նախարարին, թե «բժշկական հաստատությունները չեն վճարել աշխատավարձերը ժամանակին, որովհետեւ չեն ֆինանսավորվել: Անցյալ տարի էլ է որոշ տեղերում նման իրավիճակ եղել, մի երկու-երեք ամիս ուշացում է եղել, հետո տնօրենները տեսչական մարմինների կողմից տուգանվել են շատ մեծ թվերով. տնօրեններն անձամբ տուգանվել են աշխատավարձ չտալու համար, թեեւ չէին կարող տալ, որովհետեւ չէին ֆինանսավորվել», - ասել է նա: Վահե Հովհաննիսյանն էլ հայտարարեց, թե իրենք ռիսկերի մասին տեղեկացրել են, բայց պարզվում է՝ նախարարության նախազգուշացումներին որեւէ մեկը «բանի տեղ չի դրել». «Թույլատրելի շեղումներ են, բայց մենք պետք է նայենք մեր հնարավորությունների տեսանկյունից՝ հասկանալու համար, թե ինչպես պետք է այս համակարգը գործի, որ հավելյալ անսպասելի ֆինանսական պարտականություններ չառաջանան մեզ համար»:

Անահիտ Ավանեսյան նախարարի ձախողումների մասին բազմիցս ենք խոսել, փաստեր ներկայացրել. սա նրա հերթական ձախողումն է, երբ անգամ ֆինանսների նախարարության գործընկերների նախազգուշացումները հաշվի չեն առել, ու արդյունքում ահռելի պարտք է կուտակվել: Բուժհաստատությունները ֆինանսավորում չեն ստացել, ինչի արդյունքում չեն կարողացել վճարել աշխատավարձեր: Անահիտ Ավանեսյանն էլ, ստացվում է, ոլորտից գլուխ չի հանում եւ մտնում է մի ծրագրի տակ, որը ռիսկային է: Կամ էլ, միգուցե, ոլորտից գլուխ հանում է, բայց քանի որ Նիկոլ Փաշինյանի PR-ի համար պետք են պոպուլիստական ծրագրեր, այդքան կամք կամ ցանկություն չունի՝ հակադրվելու եւ խնդիրների մասին խոսելու: Ամեն դեպքում նախարարի պաշտոնում Ավանեսյանի «երկարակեցության» գաղտնիքը Փաշինյանին ոչ մի դեպքում չառարկելն ու նրան անվերապահորեն ծառայելը, ակտիվ կուսակցական լինելն է՝ շատերի կարծիքով:

Իսկ արդյունքում՝ տուժում է պետությունը, տուժում է առողջապահական ոլորտը, որովհետեւ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը որոշել են աննախադեպ երեւալ, ձեւացնել, թե մարդկանց ծառայում են, բայց իրականում՝ խնդիրներ ստեղծում:



Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը պաշտոնին նշանակվել է 2022 թվականի դեկտեմբերի 13-ին: Մինչեւ նախարար դառնալը Ժաննա Անդրեասյանը 2003 թվականից աշխատել է «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ պետական հիմնարկում՝ հասարակ օգնականից դառնալով ղեկավար-տնօրենի տեղակալ: 2020 թվականին, երբ Անդրեասյանը ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ էր, նրա աշխատանքի վարձատրությունը կազմում էր 14 մլն 192 հազար դրամ: Երեք տարի անց՝ 2023 թվականին, նախարարի պաշտոնում Անդրեասյանի աշխատանքի վարձատրությունը կազմում է 19 մլն 722 հազար դրամ՝ 2021 թվականի համեմատ աճելով գրեթե 5 մլն դրամով: ՀՀ ԿԳՄՍ նախարարը հայտարարագրել է 2011 թվականին ձեռք բերված մեկ անշարժ գույք՝ բնակարան բազմաբնակարան շենքում, որը գտնվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Որպես տվյալ տարվա վերջում առկա տրանսպորտային միջոց Անդրեասյանը հայտարարագրել է 2022 թվականի արտադրության HONDA մակնիշի մեքենա, որը ձեռք է բերվել հենց 2022 թվականին՝ 7 մլն 168 հազար դրամ արժողությամբ: Նախարարի բանկային հաշիվների մնացորդները կազմում են 5 մլն 370 հազար դրամ. կանխիկ դրամական միջոցներ նա չի հայտարարագրել: Ժաննա Անդրեասյանի ամուսնու՝ Պետրոս Ղազարյանի ներկայացրած հայտարարագրի մասին «Ժողովուրդ» օրաթերթը օրեր առաջ գրել էր:

Հունիսի 6-ի գիշերը Երեւան-Սեւան ճանապարհին հնչած պայթյունը նոր հարցեր է առաջացնում. ինչ հանգամանքներում գազալցակայաններից մեկում պայթուն ու դրա հետեւանքով հրդեհ եղավ, եւ ինչով էին զբաղված պետական պատասխանատու գերատեսչությունները: Գազալցակայանը, որը պայթել էր, պատկանում է «Գազ օիլ» ՍՊԸ-ին, այն մի քանի անգամ պետական մարմինների կողմից, պարզվում է, տուգանվել է: Գազալցակայանի եւ բենզալցակայանի տուգանքային պատմությունը տեսնելիս սակայն նկատելի է, որ շատ քիչ ժամանակաշրջան է այն առանց խնդիրների աշխատել: ArmLur.am-ը գրել էր, թե վերջին 2 տարվա ընթացքում քանի անգամ է տուգանվել եւ ինչպիսի արգելքներ են դրվել ՍՊԸ-ին պատկանող լցակայանի վրա: «Ժողովուրդ»-ի աղբյուրները հայտնում են, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինը այս տարի հայտնաբերել է, որ ԱՎՕ փորձաքննություն չի անցել տվյալ գազալցակայանը, ինչը ենթադրում է, որ այն անհապաղ պետք է դադարեցներ գործունեությունը, սակայն չի դադարեցրել: Հասկանալի է, որ տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանի ցուցումով միայն կարող էր նման որոշում կայացվել. իսկ թե ինչ մոտիվացիայով կարող էր տեսչականի ղեկավարը ներողամտություն ցուցաբերել, բարդ է ասել. համենայնդեպս, երբ ArmLur.am-ը դիմեց ՔՏՀԱ տեսչական մարմին, այնտեղից բացատրեցին, որ «Տեսչական մարմնի ղեկավարը, 2023 թվականից սկսած, բազմաթիվ ստուգումներ է իրականացրել, գազալցակայանների եւ բենզալցակայանների փակման որոշում է կայացրել: Ընդհանուր առմամբ, կոնկրետ պայթյունի հասցեում գտնվող «Գազ Օիլ» ՍՊԸ-ին պատկանող լցակայանին շուրջ 6 մլն դրամ եւ ավելի տուգանք է նշանակված եւ բռնագանձված: Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործելու հիմքով կասեցում ունենք, վերջին հանձնարարականով ստուգումը եղել է 2024 թվականի հունվարի սկզբին. փետրվարի 19-ին Գարեգին Խաչատրյանի հետ համագործակցելով՝ հարկադիր կատարման մարմինը ՍՊԸ-ին պատկանող բենզալցակայանը կապարակնքել է»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Վարչապետի աշխատակազմը փամփուշտ է գնում որսորդական խանութից. թերեւս ավելի անհասկանալի գնում, քան փաստաթղթում ներկայացվածն է (տես ArmLur.am կայքում)՝ դժվար թե հանդիպի: Այսինքն՝ Սուրեն Պապիկյանի գերատեսչությունը չունի՞ փամփուշտ, կամ ինչի՞ համար, որտե՞ղ պետք է օգտագործվի 889 հազար դրամի փամփուշտը: Գուցե որոշ դիպուկահարների համար է նախատեսված մասնավոր խանութի փամփուշտի այս խոշոր խմբաքանակը: Սույն հարցերը «Ժողովուրդ» օրաթերթը առաջիկայում կփորձի պարզել: Հ.Գ. *Ամեն դեպքում չենք կարծում, որ երկրի այս աղետալի վիճակին զուգահեռ՝ Փաշինյանը դարձել է որսորդության սիրահար:*

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈՎ Է ԶԲԱՂՎԱԾ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը, որը ի պաշտոնե պարտավոր է մեր երկրում արդարադատություն իրականացնելու ու հաստատելու, զբաղված է կոնկրետ ընդդիմադիր հայացքներով աչքի ընկած առաջնորդներին ու քաղաքական գործիչներին թիրախավորելու գործընթացով:

«Ժողովուրդ» օրաթերթը այսօր մի քանի հարց է ուղղել նախարարին:

-Պարոն Մինասյան, Դուք Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարն եք, եւ արդարադատության նախարարությունը մեր երկրում պետք է արդարադատության մթնոլորտն ապահովի, արդարադատություն հաստատի, մինչդեռ դուք թիրախավորել եք ընդդիմադիր առաջնորդներին, այսինքն՝ Ձեր առաջնորդի ընդդիմախոսներին եւ հրապարակային տեղադրել եք լուսանկարները: Ստացվում է՝ երկրի արդարադատության նախարարը, արդարություն հաստատելու փոխարեն, զբաղված է ընդդիմադիր առաջնորդներին թիրախավորելով: Դուք սա նորմա՞լ եք համարում:

-Ես նորմալ եմ համարում, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող որեւէ անձ, եւ յուրաքանչյուր անձ, ում օրենքով արգելված չէ քաղաքական գործունեություն իրականացնել, իր քաղաքական հայացքները կարողանա եւ հնարավորություն ունենա արտահայտելու:

-Երբ Դուք, Ձեր, այսպես ասած, հայացքներն էիք արտահայտում, քրեակատարողական հիմնարկում քաղաքացին հացադուլի մեջ էր, ինչի մասին ահազանգում էին իրավապաշտպանները: Հատուկ կառույցները, Մարդու իրավունքների պաշտպանը գնացել տեղում իրավիճակին ծանոթացել եւ ասել են, որ մարդը, որն ընդամենը պատժախուցը փոխելու ցանկություն ուներ, կարող էր մեկ-երկու օրվա ընթացքում մահանալ: Մինչդեռ մեր երկրի արդարադատության նախարարը իր քաղաքական հայացքների մասին է խոսում, պարոն Մինասյան. սա նորմա՞լ է:

-Շատ նորմալ է, որ այսօրվա մեր իրականությունում, բոլոր պետական հաստատություններում այնպիսի ժողովրդավար մեթոդներ են գործում, եւ քրեակատարողական հիմնարկներում այնպիսի մթնոլորտ է, որ յուրաքանչյուր ազատազրկված անձ, եթե ունի բողոք կամ ցանկություն, որը չի բավարարում ՔԿՀ հիմնարկը, կարողանում է այս կամ այն կերպ իր դժգոհությունն արտահայտելու: Ձեր նշած դեպքի առթիվ կարող եմ ասել, որ, հուրախություն մեզ, հացադուլավորը դադարեցրել է հացադուլը: Մյուս կողմից էլ պետք է ուշադրություն հրավիրեմ այն հանգամանքին, որ յուրաքանչյուր մարդ չի կարող, իր ցանկությամբ, ՔԿՀ-ին թելադրել, թե որ խցում գտնվի կամ ինչ պայմաններ ունենա: Դա ՔԿՀ-ն պետք է հասկանա՝ արդյոք կարելի է բավարարել խնդրանքը, թե դա այլ ազատազրկվածների նկատմամբ առավելություն ունենալու միջոց է:

-Այսինքն, ինչպես հասկանում եմ, ընդդիմախոսներին թիրախավորելու Ձեր քայլը նորմալ եք համարում, պարոն Մինասյան: Ձեր այս վարքը տեսնելով՝ հասարակ քաղաքացին ի՞նչ դասեր պիտի քաղի. եթե արդարադատության նախարարն է թիրախավորում այլոց, ապա խոսքի ատելությունն ու այլ դրսեւորումները նորմալ են դառնում: Դուք ի՞նչ օրինակ պիտի ծառայեք մեր քաղաքացիներին:

-Եթե Ձեր դիտարկմամբ, որը քաղաքական դիրքորոշում է, որոշել եք, որ անուն եւ ազգանուն դնելը թիրախավորել է, ապա ես Ձեզ հետ համաձայն չեմ: Քաղաքացիները տեսնում են, որ մեր երկրում յուրաքանչյուր ոք կարողանում է իր դիրքորոշումը հայտնել, եւ եթե որեւէ մեկը վիրավորվում է ուրիշի խոսքից եւ համարում է այն զրպարտություն, ապա կարող է քաղհայցով այդ հարցը լուծել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՈՒՄ ԵՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ». ՍՐԲԱԶԱՆ

«Իրենց արածը ո՛չ սահմանազատում, ո՛չ էլ սահմանագծում է, իրենք հարկադրանքի ներքո հանձնել են». - այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը:

Անդրադառնալով խաղաղության պայմանագրին՝ Սրբազանն ասաց. «Խաղաղության պայմանագիրը մենք պետք է բերենք, ոչ թե այս մարդիկ, այս մարդիկ խաղաղություն են մուրում, ուղղակի դռնեդուռ ընկած մուրում են: Նրանք այնտեղ ասում են՝ սահմանադրությունը փոխեք, սրանք այստեղից ասում են՝ մեկ ամսից կարող ենք խաղաղություն կնքել, սա ի՞նչ է, բանակցությո՞ւն եք համարում»:

Դիտարկմանը՝ իր տված 4 օրը մոտենում է ավարտին, նա պատասխանեց. «4 օր ասել եմ, հետո կարող է եւս 4 օր ասեմ, հետո մեկ ամիս ասեմ, հետո էլ մեկ տարի ասեմ: Այսօրը շատ կարեւոր օր է մեզ համար, եւ ես ասել եմ՝ 4 օրը պայմանական օր չէ, ես ասել եմ՝ համապատասխան թվով մեր ժողովուրդը կհավաքվի, ընդվզումը կհայտնի, իր համաձայնությունը կհայտնի ես էլ պատրաստ եմ իրականացնելու այն»:

Ապա նա հավելեց, թե այս իշխանությունները հայտարարել են, որ ջրցան մեքենաները միայն ծաղիկ ջրելու համար են լինելու, փշալարերն էլ ժանգոտելու են եւ հարց բարձրացրեց՝ բա ինչու են այստեղ:

«Եթե ժողովրդավար են ինչո՞ւ են բերել, այս մարդիկ ի՞նչ են արել, մի բան արե՞լ են, անցյալ օրն այդքան մարդ կար, որ ունեն՝ այինք չէի՞նք կարող մտնել ներս, կամ տարաբնույթ տեղեր չկա՞ն ներս մտնելու, լիքը, որից իրենք տեղյակ էլ չեն», - ասաց նա:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՊԱՐԶԱՊԵՍ ԲՈՂՔԻ ՁԱՅՆ Է ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ

«ԱԺ-ի դիմաց այսքան ոստիկանների ներկայությունը բնականոն ընթացք եք համարո՞ւմ: Ես՝ որպես ԱԺ պատգամավոր, ասում եմ՝ այս մարդիկ մեզ որեւէ անհարմարություն չեն պատճառում»:

Այս մասին Բաղրամյան պողոտայում լրագրողների հետ զրույցում ասաց պատգամավոր Գառնիկ Դանիելյանը՝ նշելով, որ նամակ է ստացել, որ ԱԺ միայն Բաղրամյան պողոտայի կողմի մուտքից կարող է մտնել:

«Փաշինյանն ասում էր՝ «ժողովուրդն է իշխանության տերը, ամեն մեկդ մի վարչապետ է, կգա՛ք, քացով դուռս կբացե՛ք»: Հիմա այս մարդիկ «քացով» չեն բացում դուռը, եկել են, իրենց պահանջները ներկայացնում են: Ես պատգամավոր եմ, եւ որեւէ քաղաքացի, որը բողոքի ձայն է բարձրացնում, ինձ չի խանգարում, օգնում է»,- ասաց պատգամավորը:

Անդրադառնալով ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի խոսքին, թե Բագրատ Սրբազանի շարժումը նպատակ ունի կրկնօրինակել Նիկոլ Փաշինյանին, եւ Բագրատ Սրբազանը պատրաստվում է փշալարերը հաղթահարելով ԱԺ մտնել, Գառնիկ Դանիելյանը պատասխանեց. «Իրենք տարված են իրենց առաջնորդին կրկնօրինակելով: Բագրատ Սրբազանը ոչ մեկին կրկնօրինակելու ցանկություն չունի:

Բագրատ Սրբազանը կայացած մարդ է, ինչո՞ւ պիտի կրկնօրինակի: Բողոքի ցույցերը բոլոր երկրներում նույն կերպ են լինում: Բողոքի ցույցերը Նիկոլ Փաշինյա՞նն է հնարել: Ո՞վ ասաց, որ Բագրատ Սրբազանը պիտի փշալարերից կախվի, իրենք են շոու անում: Գնում են ձեռքները փաթաթում, վրան սրտիկ նկարում: Ուզել են Մոնթեին նմանվեն, բայց Մոնթեի ոտքի տակի հողն էլ չարժեն»:

ՆՌՆԱԿՆԵՐԻ «ՏԱՐԱՓ»՝ ԲԱՂՐԱՄՅԱՆ 26-ՈՒՄ

Բաղրամյան պողոտայում երեկ տեղի ունեցան սոսկալի բախումներ ցուցարարների եւ ոստիկանների միջեւ: Քաղաքացիների անհնազանդության ակցիայի ընթացքում ոստիկանները շարունակեցին բիրտ ուժ կիրառել վերջիններիս նկատմամբ, այնուհետեւ իրավիճակն ավելի թեժացավ եւ ոստիկանական ուժերը սկսեցին լուսաձայնային նռնակներ կիրառել՝ այդպիսով փորձելով ցրել անհնազանդության ակցիան:

Արդյունքում շուրջ մեկ ժամ գրեթե անդադար լուսաձայնային նռնակներ էին կիրառվում Բաղրամյան պողոտայում, որի հետեւանքով տասնյակ քաղաքացիներ վիրավորվեցին, նրանցից մեկը ձեռքի դաստակի ծանր վնասվածք էր ստացել, եւ ավելի ուշ հայտարարվեց, որ քաղաքացին վիրահատվում է:

Ուշ երեկոյան ՀՀ առողջապահության նախարարությունը ներկայացրեց թարմ տվյալներ՝ Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով տուժածների վերաբերյալ:

«22:15-ի դրությամբ Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով բուժօգնության է դիմել 79 քաղաքացիական անձ եւ ոստիկան: 6 պացիենտ, անհրաժեշտ բուժօգնություն ստանալուց հետո, դուրս է գրվել», - հայտնել են առողջապահության նախարարությունից:

Նշենք, որ կիրառված լուսաձայնային նռնակների պայթյունից տուժել էր նաեւ «Ժողովուրդ» օրաթերթի օպերատոր Հովսեփ Հովսեփյանը. նռնակը վնասել էր նրա ոտքը:

ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն հանդիպել է Հռոմի պապ Ֆրանցիսկոսի հետ Վատիկանում:

Հանդիպումը տեւել է 30 րոպե, նրանք առանձնազրույց են ունեցել, իսկ հետո ներկայացրել են հայկական պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ քրիստոնեական միասնության աջակցման գծով Պապական խորհրդի ղեկավար, կարդինալ Կուրտ Կոխը:

Կաթողիկոսին ուղեկցում էին կաթողիկոսության Միջին Արեւելքում քրիստոնեություն-իսլամ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ, վարդապետ Սարգիս Աբրահամյանը եւ Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Կատարի թեմի առաջնորդ, եպիսկոպոս Մեսրոպ Սարգսյանը:

Նշենք, որ Արամ Ա-ի այցը Վատիկան մեկնարկել է հունիսի 11-ին: Նա հրավիրվել է դասախոսություն կարդալու՝ «Կրոնի դերը աշխարհաքաղաքականությունում» թեմայով:

Վատիկան կատարած այցի ընթացքում Արամ Ա-ն կհանդիպի նաեւ Վատիկանի պետական քարտուղարի, միջեկեղեցական կապերի եւ արեւելյան կաթոլիկ եկեղեցիների բաժինների ղեկավարների հետ:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՃՆՇՈՒՄ Է ՋԼՄ-ՆԵՐԻՆ ԵՎ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻՆ

Ադրբեջանի կառավարությանը մեղադրել են ՄԱԿ-ի կարեւորագույն կլիմայական բանակցությունները (COP29) հյուրընկալելու նախաշեմին ՋԼՄ-ների եւ քաղաքացիական հասարակության ակտիվությունը ճնշելու համար, հայտնել է The Guardian-ը՝ նշելով, որ հեղինակավոր Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը պարզել է նախորդ տարում առնվազն 25 լրագրողի եւ ակտիվիստի ձերբակալման դեպք:

Աղբյուրը նշում է, որ Ադրբեջանը նոյեմբերին՝ երկու շաբաթվա ընթացքում, կհյուրընկալի ՄԱԿ-ի COP29 կլիմայական գագաթնաժողովը, եւ ակնկալվում է, որ մոտ 200 երկրի կառավարություն, ներառյալ տասնյակ պետությունների ղեկավարներ, կմշակեն նոր գլոբալ մոտեցում կլիմայական ճգնաժամը լուծելու նպատակով անհրաժեշտ միջոցներ տրամադրելու համար: Շատ ակտիվիստներ եւ քաղաքացիական հասարակության խմբեր խոսել են իրենց մտահոգությունների մասին առ այն, որ կլիմայի հարցերի վերաբերյալ քարոզչությունը ճնշվում է լրատվամիջոցների նկատմամբ ճնշումների պատճառով:

Ակտիվիստներն իրենց մտահոգությունները բարձրացրել են Բոննում, որտեղ տեղակայված է Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) քարտուղարությունը: Բոննում բանակցությունների շենքի մուտքի մոտ բողոքի ակցիա է տեղի ունեցել քննարկումների ժամանակ: Մասնակիցները կոչ են արել ազատ արձակել Ադրբեջանում պահվող 23 հայ քաղբանտարկյալներին: Որոշ ցուցարարներ Ադրբեջանի կառավարությանը մեղադրել են ցեղասպանության համար:

Unilever ընկերության նախկին գործադիր տնօրեն Փոլ Փոլմանը, որն այժմ քարոզարշավ է իրականացնում կլիմայի եւ մարդու իրավունքների հարցերով, նշել է, որ ցանկանում է COP29-ն օգտագործել որպես հնարավորություն միջազգային հանրության համար՝ խոսելու բանտարկյալների նկատմամբ Ադրբեջանի վերաբերմունքի մասին, ինչի վերաբերյալ նա լուրջ մտահոգություններ ունի:

Ադրբեջանի կառավարությունը հերքել է ակտիվիստների պնդումները:

«Մենք լիովին մերժում ենք Ադրբեջանում իրավապաշտպանների եւ լրագրողների դեմ բռնաճնշումների մասին պնդումները: Ադրբեջանում ոչ ոք չի հետապնդվում քաղաքական համոզմունքների կամ գործունեության պատճառով»,- նշել է իշխանությունների ներկայացուցիչը:

ԼՈՒԾՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

ՊԵՏՔ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ ՍՏԵՂԾԵԼ

Երկու օր առաջ ԱԺ «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը Քաղրամյան պողոտայում ցուցարարներին հայտնեց, որ հունիսի 17-ին՝ եկող երկուշաբթի օրը, պետք է ԱԺ նիստ տեղի ունենա՝ կառավարության հրաժարականի օրակարգով:

Նշենք, որ ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն էլ այս մասին հայտնել էր, որ ՔՊ խմբակցությունը չի պատրաստվում ներկա գտնվելու այդ նիստին եւ այդպիսով քվորում չի ապահովվի:

Արծվիկ Մինասյանի՝ երեկվա հայտարարությունը ոչ միանշանակ էր ընդունվել շատերի կողմից, որոնցից մեկն էլ իրավաբան Գեւորգ Պետրոսյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել իրավաբան Գեւորգ Պետրոսյանի հետ, որն իր ֆեյսբուքյան անձնական էջում անդրադարձել էր այս թեմային, պարզելու համար, թե ինչն է իր զարմանքի պատճառը՝ կապված Արծվիկ Մինասյանի հայտարարության հետ:

Գեւորգ Պետրոսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ կա երկու ճանապարհ այս հարցի լուծման համար՝ արյունոտ եւ անարյուն:

«Այսօր մենք ունենք անարյուն ճանապարհ եւ արյունով՝ հավանական լեցուն ճանապարհ: Հիմա, եթե ԱԺ-ն պաշարեն, գրոհեն, չգիտեմ՝ ինչ անեն, բնական է, այնտեղ լինելու են բռնաճնշումներ ոստիկանության կողմից, որն այսօր ծառայում է մի հոգու «հետնամասերը ապահովագրելու» համար. ուրիշ ոչ մի առաքելություն չի իրականացվում, եւ երկրորդը՝ անարյուն ճանապարհ: Հիմա ես՝ որպես իրավաբան, անարյուն ճանապարհն այսպես եմ տեսնում, որ խորհրդարանական ընդդիմությունն ամբողջությամբ վայր դնի մանդատը եւ ստեղծի խորհրդարանական ճգնաժամ. ուրիշ լուծում չկա: Ճիշտ է, սահմանադրությամբ ուղղակիորեն գրված չէ, որ ընդդիմության բացակայությունը մեխանիկորեն առաջացնում է Ազգային ժողովի լուծարում, բայց մենք ունենք նորմատիվ իրավական ակտերի մասին օրենք, համաձայն որի (41-րդ հոդվածն է)՝ իրավական նորմերը պետք է ենթարկվեն համակարգային մեկնաբանման, իսկ սահմանադրության բազմաթիվ նորմերի՝ 88-րդ հոդվածի առաջին մասի, երրորդ մասի, 104 հոդվածի, 105 հոդվածի՝ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 16 հոդվածներում օգտագործվում է «ընդդիմադիր խմբակցություն» հասկացությունը, հետեւաբար, դա նշանակում է ուղղակիորեն, որ այդ համակարգային մեկնաբանման արդյունքում, եթե Ազգային ժողովում չկա ընդդիմություն, այդ Ազգային ժողովը լեգիտիմ չէ: Հիմա, եթե մենք հնարավորություն ունենք անարյուն ճանապարհով լուծելու Ազգային ժողովի հարցը, եւ դրան հաջորդեն նոր ընտրություններ, եւ բնականաբար նաեւ նոր ընտրված Ազգային ժողովի կողմից վարչապետի ընտրություն, մենք հիմա ինչո՞ւ ենք ժողովրդին տանում անորոշության, արյունահեղության: Սա է իմ ասածը»,- ասաց Գեւորգ Պետրոսյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ Է ՄԻԼԻԱՐԴԱՏԵՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը նոյեմբերյան ընտրությունների նախաշեմին կարողացել է հետ բերել խոշոր դոնորների աջակցությունը, որոնք իրենից հեռացել էին 2021թ. հունվարի 6-ին՝ Կապիտոլիումի դեմ գրոհից հետո: Թրամփը 2024թ. նախագահական մրցարշավ է մտել «Ուոլ Սթրիթում եւ ունեւոր հանրապետական դոնորների շրջանում վտարված լինելով», բայց իրավիճակը փոխվել է, եւ 2021թ. հունվարի իրադարձություններից հետո Թրամփից երես թեքած ֆինանսիստները նորից նրա կողմն են անցել: Նրանց մեջ են ամերիկյան Blackstone ներդրումային ընկերության ղեկավար, միլիարդատեր Սթիվ Շվարցմանը եւ «հյուրանոցային մագնատ» Միրիամ Ադելսոնը: Բացի այդ, հունիսի 13-ին ԱՄՆ նախկին նախագահը նախատեսում է Վաշինգտոնում հանդիպել ամերիկյան որոշ խոշոր կորպորացիաների ղեկավարների հետ: Հանդիպման 100 մասնակիցների մեջ կարող են լինել JPMorgan Chase, Citigroup եւ Bank of America բանկերի ղեկավարներ Ջեյմի Դայմոնը, Ջեյմ Ֆրեյզերը եւ Բրայան Մոյնիհանը:

Bloomberg-ի կարծիքով՝ կարեւոր պատճառներից մեկը, որով ԱՄՆ միլիարդատերերը պատրաստ են աջակցել Թրամփին, նրա մոտեցումն է հարկերին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ

Ռուսաստանը հաշվի է առնում Հարավային Կովկասի քաղաքական եւ տնտեսական իրողությունները: Այս մասին հունիսի 12-ին կայացած քննարկման ժամանակ հայտարարել է Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի Ռազմական տնտեսագիտության եւ ռազմավարության ինստիտուտի գիտական ղեկավար Դմիտրի Տրենինը:

«Ռուսաստանը կայսրություն չէ, մենք դուրս ենք եկել կայսերական դարաշրջանից, Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ Անդրկովկասի համար պայքար չկա:

Ռուսաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ շատ բարդ են, դրանք համատեղում են համագործակցության եւ փոխգործակցության տարրերը մրցակցության տարրերի հետ, բարեբախտաբար, դեռեւս ոչ թշնամական:

Ռուսաստանը ձգտում է ամեն կերպ խուսափել թշնամանքից, ինչպես եւ Թուրքիան: Այսօր ոչ ոք Թուրքիայի հետ կապված պատրանքներ չունի: Բայց այս երկիրն այսօր Ռուսաստանի շատ կարեւոր կոնտրագենտ է:

Ռուսաստանը փորձեց, եւ մասամբ հաջողվեց, 2020 թվականին ղարաբաղյան հակամարտության հետ կապված բարդ իրավիճակում հասնել եռակողմ հայտարարության, այլ ոչ քառակողմ եւ համաձայնվել ռուս-թուրքական առաքելության շրջանակում Թուրքիայի պաշտոնական ռազմական ներկայությանը:

Հետո, իհարկե, կարելի էր Թուրքիային խարանել, բայց ի՞նչ կշահեր Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը սրանից: Մեկ այլ ճակատ:

Ռուսաստանն այսօր ավելի քիչ ռեսուրսներ ունի, քան նախկինում ուներ Ռուսական կայսրությունը Օսմանյան կայսրության հետ հարաբերություններում եւ ավելի քիչ ռեսուրսներ, քան ԽՍՀՄ-ը:

Այնպես չէ, որ Ռուսաստանը համաձայն է թուրքական ազդեցության մեծացմանը, Ռուսաստանը դա պարզապես դիտարկում է որպես աշխարհաքաղաքական իրողություն:

Ռուսաստանի Դաշնության ապագան կախված կլինի նրանից, թե ինչպես, երբ եւ ինչպես կավարտվի հատուկ ռազմական գործողությունը:

Եթե Ռուսաստանը հասնի հաղթանակի, ապա բոլորովին այլ իրավիճակ կլինի, եւ Ռուսաստանը շատ ավելի ակտիվ կգործի այլ ուղղություններով, եւ դա գիտի Թուրքիան, որն իր դիրքորոշումն է ընդունել Ուկրաինայի պատերազմի վերաբերյալ, եւ այդ դիրքորոշումը ռուսամետ չէ» - ընդգծել է Տրենինը:

ԻՆՉ ՎԱՐԿԱԾՆԵՐ ԵՆ ՔՆՆՎՈՒՄ

ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ ԵՆ ՔՐ. ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ «ՖԱԶԻՆ»

Իրավապահ համակարգում ֆնեարկում է եղել, որ ֆրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանին՝ «Ֆազ»-ին սպանողը բավականին պատրաստված է եղել: Մասնավորապես՝ նա Սերգեյ Գրիգորյանին՝ «Ֆազին» սպանելու է գնացել գողացված մեքենայով: Ի դեպ, Սերգեյ Գրիգորյանի գործով 2 տարի առաջ կալանավորվել էր դատավոր Արուսյակ Ալեքսանյանը:

Մասնավորապես՝ գրել էինք, որ ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ դատավոր Ալեքսանյանը քրեական հեղինակության մասով կայացրել է այնպիսի ակտ, որով նրան ազատ էին արձակել 2,5 միլիոն գրավի դիմաց, ինչը իրավապահ համակարգում համարել էին պաշտոնական լիազորությունների չարաշահում ու դատավորը մինչ օրս կանգնած է դատարանի առաջ: Նրա սպանության գործով այս պահին բազմաթիվ վարկածներ են քննվում այդ թվում՝ «Չաղ Ռուստամի» հետ նրա հարաբերությունները:

Հիշեցնենք, որ Shamshyan. com-ը հայտնել էր, որ հունիսի 11-ի գիշերը կրակոցներ են հնչել Աջափնյակ վարչական շրջանում, ինչի հետևանքով սպանվել է քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը»: Այս պահին ողջ իրավապահ համակարգը ջանքեր է գործադրում սպանությունը բացահայտելու համար:

Իսկ ինչ սկանդալային պատմության մեջ էր նախկինում հայտնվել քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը»:

2022 թվականին Կենտրոնի դատարանում միջադեպ էր եղել ու միջադեպի «հերոսներն» էին կրիմինալ աշխարհում հայտնի Ռուստամ Ստեփանյանը՝ «Չաղ Ռուստամ» մականվամբ եւ Սերգեյ Գրիգորյանը ՝«Ֆազ» մականվամբ:

Միջադեպը տեղի էր ունեցել Կենտրոն եւ Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի բակում: «Ֆազի» եւ «Չաղ Ռուստամի» կողմնակիցներն իրար ծեծել էին: Ծեծկռտուքին միջամտել էին ոստիկանության աշխատակիցները, որից հետո «Ֆազը» դիմել էր փախուստի, իսկ «Չաղ Ռուստամն» ավելի ուշ ներկայացել էր ոստիկանություն:

Քրեական գործ հարուցվեց, սակայն Ռուստամին չկալանավորեցին, իսկ Սերգեյ Գրիգորյանը կալանավորվեց, որին ավելի ուշ ազատ արձակեցին:

Ավելի ուշ պարզվել էր, որ Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը», դատարանի դիմաց եղել էր այն պարզ պատճառով, որ իր հարազատ եղբոր՝Գրիգորի Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործով դատական նիստին պետք է ներկա լիներ: Դատական նիստը նշանակված էր եղել այդ ժամին, դրա համար էլ ներկա էր գտնվել դատարանի բակում:

Ավելի վաղ ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննություն է տարվում՝ հունիսի 11-ին Երեւանի Շինարարների փողոցում տեղի ունեցած՝ 43-ամյա տղամարդու սպանության, ինչպես նաեւ 35-ամյա տղամարդու նկատմամբ սպանության փորձ կատարելու դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

2024 թվականի հունիսի 11-ին՝ ժամը 23:17-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում քաղաքացուց ահազանգ է ստացվել այն մասին, որ Էստոնական փողոցում կրակոցներ են հնչում:

Նույն օրը՝ ժամը 23:53-ին, «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել այն մասին, որ իրենց մոտ բուժօգնության են տեղափոխվել Երեւանի 35-ամյա բնակիչը՝ «պարանոցի շրջանի հրազենային վնասվածք» եւ 43-ամյա բնակիչը՝ «գլխի, մարմնի տարբեր հատվածների հրազենային վնասվածք» ախտորոշումներով: Ավելի ուշ նշված բժշկական կենտրոնից հայտնել են, որ 43-ամյա տղամարդը մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի, 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի եւ 335-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կատարվել է դեպքի վայրի զննություն, որտեղ Երեւան քաղաքի Շինարարների փողոցում՝ միմյանց բախված վիճակում, կայանված են եղել «LAND CRUISER», «TOYOTA CAMRY», «OPEL ASTRA» եւ «TOYOTA COROLLA» մակնիշների ավտոմեքենաներ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂԻ ԳՈՐԾԸ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանող Ռաֆիկ Հովհաննիսյանի սպանության դեպքի առթիվ քննվող քրեական վարույթի համակողմանի նախաքննության ընթացքում կատարված բացառապես քննչական մեծածավալ գործողությունների արդյունքում բացահայտվել են շրջադարձային նշանակության նոր էական հանգամանքներ:

Ավելի վաղ ՀՀ ՔԿ-ն տեղեկացրել էր, որ 2024 թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, 17-ամյա երիտասարդն ընկերոջ հետ գտնվել է հիշյալ քոլեջին հարող տարածքում գործող սննդի կետի մոտ, երբ 6-7 երիտասարդներ, այդ թվում՝ Երեւան քաղաքի բնակիչներ, 21-ամյա Դ.Պ.-ն, վերջինիս ընկերներ՝21-ամյա Ա.Մ.-ն եւ 19-ամյա Հ.Ս.-ն, վազել են նրա ուղղությամբ: Երիտասարդների միջեւ վիճաբանություն է սկսվել, որի ժամանակ երիտասարդներից մեկը դանակով մի քանի անգամ հարվածել է 17-ամյա երիտասարդի մարմնի տարբեր հատվածներին, ինչի հետեւանքով նա վայր է ընկել, որից հետո տղաները շարունակել են ոտքերով, մահակով հարվածներ հասցնել գետնին ընկած երիտասարդի մարմնին: Հավաքված անձանց միջամտության արդյունքում վիճաբանությունը դադարել է, հիշյալ 6-7 տղաները դիմել են փախուստի:

Ավելի ուշ Դ.Պ.-ն, եւ Ա.Մ.-ն, դեպքի հետ առնչություն չունեցող եւս մեկ անձի հետ հայտնաբերվեցին Սիսիան քաղաքում եւ ներկայացվեցին վարույթն իրականացնող մարմնին:

Նախաքննության սկզբնական փուլում ձեռք բերված փաստական տվյալների, այդ թվում՝ Ա.Մ.-ի տված ցուցմունքների հիման վրա 21-ամյա երիտասարդին մեղադրանք էր ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Մյուս երկու անձանց՝ Ա.Մ.-ին եւ Հ.Ս.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով, որոնցից առաջինի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել էր տնային կալանքը, իսկ մյուսի նկատմամբ՝կալանքը եւ հայտարարվել էր հետախուզում:

Ձեռք բերված նոր փաստերի հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին՝ մեղադրյալներին առաջադրված մեղադրանքները փոփոխելու եւ նրանց նկատմամբ նոր հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որոնք բավարարվել են: Արդյունքում 21-ամյա Դ.Պ.-ն-ին մեղսագրվող արարքների ծավալից հանվել է սպանության մեղադրանքը եւ նոր մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Խափանման միջոցը թողնվել է անփոփոխ: Նույն հոդվածներով նոր քրեական հետապնդում է հարուցվել նաեւ հետախուզման մեջ գտնվող Հ.Ս.-ի նկատմամբ:

Իսկ Ա.Մ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Վերջինս իրեն լիովին մեղավոր է ճանաչել եւ տվել է խոստովանական ցուցմունքներ:

Դատարանի որոշմամբ նրա նկատմամբ նախկինում կիրառված խափանման միջոց տնային կալանքը փոփոխվել է եւ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԿԻՆ ԳՅՈՒՂԱՊԵՏՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

ՄԻՊ-ն անդրադարձել է Հաթերքի նախկին գյուղապետ Վարդան Գրիգորյանին ձերբակալելու վերաբերյալ ահազանգերին:

«Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ահազանգ է ստացվել առ այն, որ ձերբակալել են Հաթերքի գյուղապետ Վարդան Գրիգորյանին՝ մեքենայում միայնակ թողնելով վերջինիս մանկահասակ երեխաներին:

Պաշտպան Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ՝ դեպքի մանրամասները հրատապության կարգով բանավոր ընթացակարգով ճշտվել են պետական իրավասու մարմինների հետ: Արդյունքում՝ պարզվել է, որ Վարդան Գրիգորյանն ազատ է արձակվել: Դեպքի հանգամանքների մանրամասները պարզելու նպատակով գրավոր պարզաբանում կպահանջվի նաեւ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից», - ասված է ՄԻՊ-ի տարածած հաղորդագրության մեջ:

Ավելի վաղ իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանն իր ֆեյսբուքյան էջում գրել էր. «Բյուրականի մոտակայքում սեփական մեքենայից շատ վատ ձեւով ձերբակալել են Հաթերքի գյուղապետ Վարդան Գրիգորյանին»:

ՈՎ ԷՐ ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ «ՖԱԶԸ»

Shamshyan. com-ը հայտնել էր, որ երեկ գիշեր կրակոցներ են հնչել Աջափնյակ վարչական շրջանում, ինչի հետեւանքով սպանվել է քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը»: Այս պահին ողջ իրավապահ համակարգը ջանքեր է գործադրում սպանությունը բացահայտելու համար:

Իսկ ինչ սկանդալային պատմության մեջ էր նախկինում հայտնվել քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը»:

2022 թվականին Կենտրոնի դատարանում միջադեպ էր եղել ու միջադեպի հերոսները կրիմինալ աշխարհում հայտնի Ռուստամ Ստեփանյանն էր՝ «Չաղ Ռուստամ» մականվամբ եւ Սերգեյ Գրիգորյանը ՝«Ֆազ» մականվամբ:

Միջադեպը տեղի էր ունեցել Կենտրոն եւ Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի բակում: «Ֆազի» եւ «Չաղ Ռուստամի» կողմնակիցներն իրար ծեծել էին: Ծեծկռտուքին միջամտել էին ոստիկանության աշխատակիցները, որից հետո «Ֆազը» դիմել էր փախուստի, իսկ «Չաղ Ռուստամն» ավելի ուշ ներկայացել էր ոստիկանություն:

Քրեական գործ հարուցվեց, սակայն Ռուստամին չկալանավորեցին, իսկ Սերգեյ Գրիգորյանը կալանավորվեց, որին ավելի ուշ ազատ արձակեցին:

Ավելի ուշ պարզվել էր, որ Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը», դատարանի դիմաց եղել էր այն պարզ պատճառով, որ իր հարազատ եղբոր՝Գրիգորի Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործով դատական նիստին պետք է ներկա լիներ: Դատական նիստը նշանակված էր եղել այդ ժամին, դրա համար էլ ներկա էր գտնվել դատարանի բակում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունիսի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 40 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴՊՐՈՑԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՄԻՍ Է ԴԱԴԱՐԵՑՎԱԾ Է

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը շուրջ 3 ամիս է դադարեցված է. ոչ մի աշխատանք չի կատարվում: Դպրոցի շինարարությունը սկսվել է 2022 թվականի վերջին. շինարարության ավարտի ժամկետի երկարաձգումից հետո այն պետք է ավարտվեր 2024 թվականի հունիսի կեսին: Դպրոցի շենքը կառուցվում է պետական բյուջեի՝ 1 միլիարդ 218 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, շինարարությունը իրականացնում է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն: Զրուցեցինք այդ շինարարության նախկին աշխղեկ, Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Սերոյոժա Ամիրաղյանի հետ: Նա ասաց, որ սահմանամերձ Դովեղում տեղացի բանվորներ են աշխատել, սակայն հետո ընկերությունը նրանց փոխարինել է պարսիկ բանվորներով, որոնց էլ փոխարինել է արաբներով: Սահմանագոտում՝ Ադրբեջանի հետ սահմանից մի քանի կիլոմետր հեռավորությամբ, իրանցի, արաբ բանվորներ աշխատեցնելը կարող է խնդիրներ ստեղծել սահմանի անվտանգության համար: Ս. Ամիրաղյանը հայտնեց, որ ինքը մարտի 31-ին, «Կանժիլստրոյ» ՍՊԸ տնօրենի հետ վիճաբանելուց հետո, դուրս է եկել աշխատանքից. «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն իրեն աշխատավարձի գումարներ է պարտք: Նա հայտնեց, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի տնօրենն իր աշխատավարձի գումարները չվճարելը պատճառաբանել է այն բանով, որ քաղաքաշինության կոմիտեում վարչության պետի պաշտոնը թափուր է , պետք է այդ վարչության ղեկավար նշանակվի, որ Դովեղում շինաշխատանքների ֆինանսավորում լինի: «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն այժմ նաեւ Վայոց ձորի Չիվա գյուղում է դպրոց կառուցում: Ս. Ամիրաղյանն ասաց, որ Դովեղի դպրոցի աշխատանքների ժամանակ այս գարնանը տրակտորիստ է աշխատել, որից հետո սակայն տեղափոխել են Չիվայի դպրոցի շինարարություն: Դովեղի դպրոցի նորակառույց շենքը գտնվում է Դովեղ մտնող ճանապարհի եզրին. դրանից ցած պետք է հենապատ կառուցվեր, սակայն այն չի կառուցվել, դեպի սահմանագոտի տանող, ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհը հենապատի բացակայության պատճառով կարող է փլչել: Դպրոցի շինարարության ավարտի վերջնաժամկետ է սահմանվել այս ամսվա՝ հունիսի կեսը, սակայն դպրոցի շենքի շինարարությունը կատարվել է ընդամենը 20-25 տոկոսով: Ինչո՞վ են զբաղվել քաղաքաշինության կոմիտեն, Տավուշի մարզում պետական ծրագրերի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Տավուշի մարզապետարանը, Նիկոլ Փաշինյանի քավոր մարզպետ Հայկ Ղալումյանը, եթե Դովեղի դպրոցի շինարարությունը վաղուց դադարեցված է :

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՅԹՅՈՒՆԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

ԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆԸ ՀՈՒՆՎԱՐԻՑ ՉՊԵՏՔ Է ԳՈՐԾԵՐ

Հունիսի 6-ի գիշերը Երեւան-Մեւանա ճանապարհին ոստյթյունի ձայն է հնչել գազալցակայաններից մեկի կողմից. ավելի ուշ նկատվել է, որ հրդեհ է բռնկվել:

Գազալցակայանի եւ բենզալցակայանի գործունեության պատմությունը խառն է, նույնիսկ՝ կոռումպացված:

Գազալցակայանը, որը պայթել էր, պատկանում է «Գազ օիլ» ՍՊԸ-ին. այն մի քանի անգամ պետական մարմինների կողմից տուգանվել է:

Գազալցակայանի եւ բենզալցակայանի տուգանքի պատմությունը տեսնելիս նկատում ենք, որ այն իր գործունեության ընթացքում շատ քիչ ժամանակաշրջան է առանց խնդիրների աշխատել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, թե վերջին 2 տարվա ընթացքում որքան է տուգանվել, քանի անգամ եւ ինչպիսի արգելքներ են դրվել ՍՊԸ-ին պատկանող լցակայանի վրա:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրն էլ այսօր շոկային բացահայտում արեց, ըստ որի՝ գազալցակայանի պայթյունի հետ կապված՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, երբ այս տարի հայտնաբերել է, որ որպես «ԱԿՕ» փորձաքննություն չի անցել տվյալ գազալցակայանը, անհապաղ պետք է դադարեցներ գործունեությունը, սակայն չի դադարեցրել: Աղբյուրն ասում է, որ տեսչական մարմնի պետ Գարեգին Խաչատրյանի ցուցումով չի դադարեցվել, ու թույլատրել են աշխատել: Մեր աղբյուրը նշում է, որ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը անձամբ ցուցում է տվել, որ գազալցակայանին «չկպնեն»: Ավելին՝ ՍՊԸ-ին պատկանող գազա եւ բենզալցակայանները գործուն պահելու համար Գարեգին Խաչատրյանն ու «Գազ օիլ» ՍՊԸ-ի սեփականատեր Ռաֆայել Այվազյանը որոշակի գործարքների մեջ են եղել, որից հետո լցակայանի աշխատանքը վերականգնվել է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը ճշտելու համար դիմեց ՔՏՀԱ տեսչական մարմին, որտեղից կտրուկ արձագանքեցին մեր տեղեկությանը՝ նշելով, որ սա մանիպուլյացիա է:

«Տեսչական մարմնի ղեկավարը 2023 թվականից սկսված բազմաթիվ ստուգումներ է իրականացրել, գազալցակայանների եւ բենզալցակայանների փակման որոշում է կայացրել: Ընդհանուր առմամբ կոնկրետ պայթյունի հասցեում գտնվող «Գազ Օիլ» ՍՊԸ-ին պատկանող լցակայանին շուրջ 6 մլն դրամ եւ ավելի տուգանք են նշանակված եւ բռնագանձված: «Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործելու հիմքով՝ կասեցում ունենք. վերջին հանձնարարականով ստուգումը եղել է 2024 թվականի հունվարի սկզբին, փետրվարի 19-ին Գարեգին Խաչատրյանի հետ համագործակցելով՝ հարկադիր կատարման մարմինը ՍՊԸ-ին պատկանող բենզալցակայանը կապարակնքել է:

Սեփականատերն ասում է՝ ես ունեմ բոլոր փաստաթղթերը փորձաքննությունների, դրանք զուտ նախագծային փաստաթղթերը նա ունի, բայց նախագծային փաստաթուղթը չի ենթադրում, որ օրինակ՝ փորձարկումն արվել է, եւ լցակայանը ճանաչվել է անվտանգ՝ շահագործման համար:

Տեսչական մարմին դիմել, է մենք շահագործման համար տվել ենք բացասական պատասխան:

Ես բացառում եմ կաշառքի լուրը, ես համարում եմ այն զրպարտություն, չգիտեմ՝ ինչ միտում ունեն մարդիկ: Գուցե նրանք նեղացած են, ինչ-որ գործառույթներով առնչվել են տեսչական մարմնի հետ եւ չեն ապահովվել իրենց ցանկալի արդյունքները եւ փորձում են այս կերպ անվանարկել եւ վարկաբեկել Գարեգին Խաչատրյանի անունը, բայց ես բացառում եմ», - մեր հարցերին ի պատասխան՝ հայտնեցին տեսչական մարմնից:

Տեսչական մարմնից բացառում են ղեկավարի կողմից գործարքների գնալու հանգամանքը, սակայն փաստն այն է, որ, չգիտես, թե ինչպես, լցակայանը շահագործվել է մի քանի տուգանքներ եւ արգելքներ կրելուն զուգահեռ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖԻԶԻԿԱ...». ՀԱՄԱԺՈՂՈՎ ԿԼԻՆԻ

Հունիսի 18-21-ը Երեւանում, Աշտարակում եւ Մեծամորում կանցկացվի «Ժամանակակից ֆիզիկա. հանրամատչելիացման եւ ուսուցման հիմնախնդիրներ ու լուծումներ» խորագիրը կրող համաժողովը:

Գիտաժողովի բացումը տեղի կունենա Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում հունիսի 18-ին: Նախատեսված են զեկուցումներ Ֆիզիկայի զարգացման ժամանակակից միտումները, Աստղաֆիզիկան այսօր, Փորձարարական ֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները, Լազերային ֆիզիկա թեմաներով:

Հունիսի 19-ին գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն Աշտարակի ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում:

Այստեղ բացի զեկուցումներից նախատեսված է նաեւ փորձարարական մաս:

Հունիսի 20-ին աշխատանքները կշարունակվեն Մեծամորում տեղակայված Հայաստանի ատոմային էլեկտրակայանում: Համաժողովի մասնակիցների համար ատոմակայանի մասնագետների կողմից կներկայացվեն զեկուցումներ ատոմային եւ միջուկային ֆիզիկայի վերաբերյալ: Մեծամորի ատոմակայանի աշխատանքային ողջ ցիկլը կուղեկցվի էքսկուրսիաներով եւ ցուցադրումներով: Աշխատանքային օրը կավարտվի ատոմակայանի ղեկավարության հետ հանդիպմամբ:

Գիտաժողովի վերջին օրը՝ հունիսի 21-ին, աշխատանքները կիրականացվեն Երեւանում՝ ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական պրոբլեմների ինստիտուտում:

Ջեկուցումները կվերաբերեն քվանտային ֆիզիկային ու ավագ դպրոցում վերջինի հիմունքների դասավանդմանը: Համաժողովի մասնակիցները կլինեն ինստիտուտի լաբորատորիաներում, հնարավորության սահմաններում՝ ըստ նախասիրության, կծանոթանան փորձարարական տեղակայանքներին: Ինստիտուտի տնօրեն Վ. Քոչարյանը ֆիզիկայի ուսուցիչներին կծանոթացնի ինստիտուտի պատմությանն ու ձեռքբերումներին: 4-օրյա աշխատանքների արդյունքների ամփոփումից հետո մասնակիցներին կշնորհվեն հավաստագրեր:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ Գիտությունների ազգային ակադեմիայի հետ համագործակցությամբ Երեւանում եւ ՀՀ բոլոր մարզերում հոկտեմբերի 1-6-ը կանցկացվի «Գիտության շաբաթ» փառատոնը: Միջոցառումն իրականացվում է «Գիտուժ» ծրագրի նախաձեռնությամբ: «Գիտության շաբաթ» փառատոնը կկրի միջազգային բնույթ: Վերջինիս շրջանակում կանցկացվեն ապակենտրոնացված միջոցառումներ նախադպրոցական, հանրակրթական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Գիտության շաբաթվա շրջանակում Երեւանի Ազատության հրապարակում կանցկացվի Գիտության փառատոն, որը բաղկացած կլինի թեմատիկ 3 մասերից: Առաջին մասը կանցկացվի հոկտեմբերի 1-2-ը եւ կկրի «Գիտությունն ամենուրեք է» խորագիրը, երկրորդը մասը տեղի կունենա հոկտեմբերի 3 4-ը՝ «Մասնագիտական կողմնորոշում» թեմայով, իսկ երրորդ մասը կկրի «Գիտական ֆանտաստիկա» խորագիրը եւ կանցկացվի հոկտեմբերի 5-6-ը:

«Գիտության շաբաթը» հասարակության տարբեր շերտերի համար նախատեսված բազմաձեւաչափ միջոցառումների շարք է, որի նպատակն է համազգային մակարդակով հանրահռչակել գիտությունն ու տեխնոլոգիաները, բացատրել վերջիններիս անփոխարինելի դերը եւ նշանակությունը ժամանակակից աշխարհում, գիտությունը դարձնել հրապուրիչ երիտասարդների համար, ինչպես նաեւ խթանել քննադատական մտքի եւ գիտելիքահենք դիսկուրսի զարգացումը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 5 պատահար. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ տացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Արամայիս Խաչիկի Կարապետյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝ - ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Հ. Մանանդյան փողոց, 41/48 հասցեում գտնվող 313,19 քմ բնակելի տուն, 13,36 քմ /42,8 խմ/ պարիսպ, 9,8 քմ /31,4 խմ/ պարիսպ եւ 0,1055 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 108600000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 01.07.2024թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am , www.borsa.am կայքերը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՃ. ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԱՅՈՒՆԱՆՈՒՄ Է

Ըստ Համաշխարհային բանկի վերջին «Գլոբալ տնտեսական զարգացումներ» զեկույցի, ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսությունը կկայունանա 2024 թվականին՝ առաջին անգամ վերջին երեք տարում: Սակայն համաձայն վերջին ոլորտային չափանիշների, կայունացումը թույլ մակարդակի վրա է:

Կանխատեսվում է, որ 2024 թվականին համաշխարհային աճը կպահպանվի 2,6 տոկոսի մակարդակում, նախքան 2025-26 թվականներին հասնելով միջինը 2,7 տոկոսի: Սա զգալիորեն ցածր է ՔՈՎԻԴ-19-ին նախորդող տասնամյակի միջին 3,1%-ից: Կանխատեսումը ենթադրում է, որ 2024-2026 թվականների ընթացքում երկրները, որոնք միասին կազմում են աշխարհի բնակչության եւ համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 80%-ը, ավելի դանդաղ տեմպերով կշարունակեն աճել, քան ՔՈՎԻԴ-19-ին նախորդող տասնամյակում:

Ընդհանուր առմամբ, կանխատեսվում է, որ զարգացող տնտեսությունները 2024-25 թվականներին միջինում կաճեն 4 տոկոսով, ինչը մի փոքր ավելի դանդաղ է, քան 2023 թվականին: Ակնկալվում է, որ ցածր եկամուտ ունեցող երկրների աճը 2024 թվականին կաճի մինչեւ 5 տոկոս, 2023 թվականի 3,8 տոկոսից: Այնուամենայնիվ, 2024 թվականի տնտեսական աճի կանխատեսումները արտացոլում են հունվարից սկսած յուրաքանչյուր չորս ցածր եկամուտ ունեցող երկրների վարկանիշների անկումը: Զարգացած երկրներում 2024 թվականին աճը կմնա կայուն՝ 1,5 տոկոս, մինչ 2025 թվականին կբարձրանա՝ հասնելով 1,7 տոկոսի:

Ակնկալվում է, որ այս տարի յուրաքանչյուր չորրորդ զարգացող տնտեսությունից մեկն ավելի աղքատ կմնա, քան 2019-ի համավարակի նախօրեին էր: Այս համամասնությունը երկու անգամ ավելի բարձր է խոցելի եւ հակամարտությունից տուժած երկրների համար: Ավելին, զարգացող եւ զարգացած երկրների միջեւ եկամուտների տարբերությունը կաճի 2020-2024 թվականներին զարգացող երկրների գրեթե կեսի համար՝ ամենաբարձր մակարդակը 1990-ականներից ի վեր: Այս երկրներում մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը, որը կենսամակարդակի կարեւոր ցուցանիշ է, ակնկալվում է, որ մինչեւ 2026 թվականը կաճի միջինը 3,0 տոկոսով, ինչը զգալիորեն ցածր է ՔՈՎԻԴ-19-ին նախորդող տասնամյակի միջին 3,8 տոկոսից:

Ակնկալվում է, որ 2024 թվականին համաշխարհային գնաճը կնվազի մինչեւ 3,5 տոկոս, իսկ 2025 թվականին՝ 2,9 տոկոսով, սակայն անկման տեմպերն ավելի դանդաղ կլինեն, քան կանխատեսվում էր ընդամենը վեց ամիս առաջ:

Արդյունքում՝ շատ կենտրոնական բանկեր զգույշ կլինեն տոկոսադրույքների նվազեցման հարցում: Համաշխարհային տոկոսադրույքները, ամենայն հավանականությամբ, կմնան բարձր վերջին տասնամյակների ստանդարտներով՝ միջինը կազմելով շուրջ 4 տոկոս 2025-26 թվականներին՝ մոտավորապես կրկնապատկելով 2000-2019 թվականների միջին ցուցանիշը:

«Չնայած պարենի եւ էներգակիրների գներն ամբողջ աշխարհում նվազել են, հիմնական գնաճը մնում է համեմատաբար բարձր եւ կարող է մնալ այդպիսին», - ասում է Համաշխարհային բանկի գլխավոր տնտեսագետի տեղակալ եւ հեռանկարային խմբի տնօրեն Այհան Կոսեն: «Սա կարող է դրդել խոշոր եւ զարգացած տնտեսությունների կենտրոնական բանկերին հետաձգել տոկոսադրույքների կրճատումը: «Ավելի բարձր եւ երկար պայմանները» կնշանակեն համաշխարհային ֆինանսական պայմանների խստացում եւ զարգացող տնտեսություններում շատ ավելի թույլ աճ»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մարիամ Մարսելի Մաթեւոսյանս, շուրջ 2 տարի առաջ Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում կորցրել եմ ԵՊՀ միջազգային հարաբեությունների ֆակուլտետի բակալավրիատի՝ 2004թ. տրամադրված AB 019470 համարի, նույն ֆակուլտետի մագիստրատուրայի՝ 2006թ. տրված AM 006206 համարի եւ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի /հեռակա/ 2013թ. տրված AB 172406 համարի դիպլոմներս:

Գտնողներին խնդրում եմ զանգահարել 077 055 003 հեռախոսահամարով:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 01 հուլիսի 2024 թվականին, ժամը 12:00-ին,

ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝30.12.2024թ.- ին: Աճուրդի կազմակերպիչն է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

. Լոտ՝ՀՀ, Լոռու մարզ, համայնք Տաշիր, Տաշիր ք., Երեւանյան փողոց, 5-րդ թաղամաս, 179 հասցեում գտնվող 378,1 քմ բնակելի տուն, 32,3 քմ խանութ, 30,7 քմ ավտոտնակ, 38,4 քմ ավտոտնակ եւ 0,0975 հա հողամաս,

. Լոտի մեկնարկային գինը՝ 37800000 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,

. Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՖԵՍՏԻՎԱՌ»

ՓԱՌԱՏՈՆԸ ԴԱՐՁԱՎ ԱՄԵՆԱՄՅԱ

«Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնն այս տարի կանցկացվի 3 համայնքում՝ Գյումրիում, Իջեւանում եւ Եղեգնաձորում՝ հուլիսի 27-ին, օգոստոսի 10-ին եւ 24-ին: Փառատոնն անցկացվում է երկրորդ անգամ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ, Հանրային հեռուստաընկերության հետ համատեղ:

Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում տեղի ունեցած համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ այս մասին հայտնել են ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանը:

Նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ նախորդ տարի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Հանրային հեռուստաընկերության համագործակցությամբ նախաձեռնված ծրագիրն ամբողջությամբ համահունչ է Կառավարության՝ մշակույթի ապակենտրոնացման քաղաքականությանը. «Մշակույթի ռազմավարության կարեւոր կետերից է մարզերում մշակութային կյանքի ակտիվացումն ու համապատասխան միջավայրերի ձեւավորումը, ինչին էլ միտված է «Ֆեստիվառ» փառատոնի իրականացումը: Մարզային 3 քաղաքներում «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնի անցյալ տարվա միջոցառումները ցույց տվեցին, որ ծրագիրը պահանջված ու սպասված էր մարզերում»:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ նախարարությունը բազմաթիվ ծրագրեր է իրականացնում մարզերում, որոնք ուղղված են մշակութային ակտիվության խրախուսմանը:

«Այդ իմաստով «Ֆեստիվառն» իրոք աննախադեպ ցուցանիշներ է ունեցել. ավելի քան 50 հազար այցելու է գրանցվել:

Փաստական այս արդյունքը հիմք դարձավ, որպեսզի մարզային երաժշտական այս փառատոնը դառնա ամենամյա:

Քաղաքների ընտրության պարագայում փորձ է արվել հնարավորինս ընդլայնել աշխարհագրությունը, եւ ներառել այն քաղաքները, որոնցում կարեւորվում է զբոսաշրջային մեծ ակտիվությունը: Որակյալ երաժշտության եւ ծրագրի առկայությանն առանցքային նշանակություն է տրվում: Փառատոնային այս ձեւաչափը նաեւ հնարավորություն է տալիս մեր քաղաքացիներին նորովի բացահայտել Հայաստանը»,- նշել է նախարարը:

Նրա տեղեկացմամբ՝ փառատոնային միջոցառումները նախատեսվում են ոչ աշխատանքային օրերին, որպեսզի այցելուները հնարավորություն ունենան մասնակցելու համերգներին, ինչպես նաեւ այցելելու տվյալ մարզի պատմամշակութային վայրեր: Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ մարզերում տնտեսական կյանքի զարգացման վրա փառատոնի թողած ազդեցությունը. «Փառատոնի ծրագրի կարեւոր բաղադրիչներից է նաեւ տեղի տնտեսվարողներին հարթակի տրամադրումը՝ իրենց արտադրանքը եւ ծառայությունները ներկայացնելու, դրանք ճանաչելի դարձնելու նպատակով: Կարեւոր է նաեւ այն փաստը, որ փառատոնային ծրագրում ակտիվորեն ընդգրկված են մարզերի մշակութային խմբերը եւ հաստատությունները, որոնք օրվա ընթացքում ելույթներ են ունենում՝ եւս մեկ հնարավորություն ունենալով իրենց ստեղծագործություններն ու կատարումները ներկայացնելու հանրությանը»:

Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանը շնորհակալություն է հայտնել ԿԳՄՍ նախարարությանը՝ միջոցառման իրականացմանը ցուցաբերած աջակցության համար:

«Կարծում եմ՝ կարեւոր ուղերձ է, որ մենք մշակույթը տանում ենք մարզեր ու նմանօրինակ խոշոր միջոցառումներ կազմակերպում ենք հենց մարզերում: Հանրային հեռուստաընկերության համար եւս սա կարեւոր փորձառություն է, քանի որ ոչ թե պարզապես հեռարձակողի դերում ենք, այլ՝ մի մեծ փառատոնի կազմակերպչի: Կարեւոր է, որ միջոցառումն այսուհետ կկրի ամենամյա բնույթ: Նախորդ տարվա փառատոնից հետո տարբեր քաղաքներից առաջարկներ ենք ստացել «Ֆեստիվառն» անցկացնելու վերաբերյալ», - ասել է Հովհաննես Մովսիսյանը:

Ներկայացնելով «Ֆեստիվառի» ծրագիրը՝Հովհաննես Մովսիսյանը նշել է, որ հուլիսի 27-ին Գյումրու Վարդանանց հրապարակում ելույթ կունենա ՀՀ վաստակավոր արտիստ Թաթա Սիմոնյանը: Օգոստոսի 10-ին Իջեւանում նախատեսվում է հայ-վրացական համերգային ծրագիր՝ երկու երկրների տարբեր կատարողների մասնակցությամբ, իսկ օգոստոսի 24-ին Եղեգնաձորում ելույթ կունենա «Եվրատեսիլ 2024»-ում Հայաստանը ներկայացրած «Լադանիվա» խումբը՝ ի թիվս այլ արտիստների:

Մյուս կարեւոր բաղադրիչը, ըստ Հովհաննես Մովսիսյանի, տեղական արտադրանքի վաճառքն է. համայնքներում տեղական արտադրողներին տրամադրվում են անվճար վրանային հատվածներ՝իրենց արտադրանքը ներկայացնելու եւ վաճառելու համար:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԳՆԵԼ ԱԿՈՒՄԲԸ

Լոնդոնաբնակ գործարար Վաչե Մանուկյանի ղեկավարած կոնսորցիումը միացել է անգլիական «Էվերթոն» ֆուտբոլային ակումբը գնելու պայքարին:

Այս մասին գրում է The Guardian-ը:

Վաչե Մանուկյանը 400 միլիոն ֆունտ ստեռլինգ է առաջարկել «Էվերթոն»-ը գնելու համար՝ներդրողների ներգրավելով նաեւ ԱՄՆ-ից եւ Ծոցի երկրներից:

Բացի Վաչե Մանուկյանից, անգլիական ակումբի գնման գործընթացին մասնակից են ուզում դառնալ նաեւ MSP Sports Capital-ի սեփականատերերը, ինչպես նաեւ բրիտանացի գործարարներ Էնդի Բելլն ու Ջորջ Դաուինինգը:

Վաչե Մանուկյանը իր կարիերան սկսել է Միացյալ Թագավորությունում՝ աշխատելով որպես փաստաբան:

ՀԱՅ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ՝ ԱՌԱՔԱՏԱՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Հայաստանը ներկայացնող շախմատիստ Մամիկոն Ղարիբյանն աշխարհի մինչեւ 20 տարեկանների առաջնության առաջատարներից է:

Ավարտվեց շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնության 8-րդ խաղափուլը:

Պատանիների առաջնությունում հայ շախմատիստներ Մամիկոն Ղարիբյանը եւ Ռուդիկ Մակարյանն ունեն 6.5 միավոր եւ կիսում են առաջին հորիզոնականը Նոգերբեկ Կազիբեկի եւ Կարդոսո Կարդոսո Խոսե Գաբրիելի հետ:

Աղջիկների առաջնությունում Մարիամ Մկրտչյանն ունի 6.5 միավոր եւ կես միավորով հետ է մնում միանձնյա առաջատար Դիվյա Դեշմուխից:

Առաջնության ավարտին մնացել է 3 որոշիչ խաղափուլ:

ԼԵՀԱՍՏԱՆԸ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵՑ

Եվրո-2024-ին պատրաստվող հավաքականներն անցկացրին հերթական ընկերական հանդիպումները:

Նիդեռլանդների հավաքականը 4:0 հաշվով առավելության հասավ իսլանդացիների նկատմամբ, որոնք նախորդ խաղում 1:0 հաշվով պարտության էին մատնել Անգլիայի թիմին:

Լեհաստանի հավաքականը 2:1 հաշվով հաղթեց թուրքերին:

Չեխիայի թիմը նույն հաշվով ուժեղ էր Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականից:

Ընկերական հանդիպումներ

Նիդեռլանդներ - Իսլանդիա՝4:0

Խավի Սիմոնս, 23, Վիրջիլ վան Դեյք, 49, Դոնիել Մալեն, 79, Վաուտ Վեգորստ, 90+4

Լեհաստան - Թուրքիա՝2:1

Կարոլ Սվիդերսկի, 12, Նիկոլա Զալեւսկի, 90 - Բարիշ Ալպեր Յիլմազ, 77

Չեխիա - Հյուսիսային Մակեդոնիա՝ 2:1

Պատրիկ Շիկ, 60, 11մ, Անտոնին Բարակ, 90+9, 11մ - Իսնիկ Ալիմի, 65:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԵՂԵԳԻՍԻ ՁՈՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Պետության-մասնավոր համագործակցության շրջանակում եւ բարերարների միջոցներով մեկնարկել են Վայոց ձորի մարզի Ջորաց վանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցու, գավթի, պարսպապատերի եւ կցակառույց կացարանների ամրակայման, նորոգման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները:

Հիշեցնենք, որ նախագիծը քննարկվել էր 2023 թվականի մարտին կայացած գիտամեթոդական խորհրդի նիստում եւ արժանացել հավանության:

Եղեգիսը եղել է Սյունյաց աշխարհի միջնադարյան նշանավոր բնակավայրերից մեկը: Այն IX դարի առաջին տասնամյակներից մինչեւ XVII դարի կեսերը եղել է Վայոց ձորի քաղաքական կենտրոնը՝ միաժամանակ կարեւոր դեր խաղալով Սյունյաց աշխարհի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում: Քաղաքը հատկապես նկատելի վերելք է ապրել XIII-XIV դարերում, երբ Վայոց ձորում իշխում էր Օրբելյան իշխանական տունը:

Ջորաց եկեղեցին գյուղի արեւելյան ծայրին միջնադարյան հայ ճարտարապետության յուրօրինակ հուշարձաններից է:

Այն կառուցել է Սյունյաց նահանգի մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայիճը (1324-1331թթ.):

«ԱՀՆԻՁՈՐ»

Գեղանկարիչ Խաչիկ Ղարաբեկյանի համար բնության հետ շփումը առանցքային էր, որի լավագույն վկայությունը առանձնատուն-արվեստանոցն էր, որ նա կառուցեց 80-ականներին Ահնիձորում՝ Հրանտ Մաթեւոսյանի տան հարեւանությամբ: Լոռվա բնաշխարհն ու արվեստը միավորելու մեծ ցանկությամբ Մաթեւոսյանները վերաձեւակերպել ու «Նկարչի Տուն» կոնցեպտով «Ահնիձոր» հյուրատունն են բացել: Գաղափարը կյանքի է կոչվել «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար» ծրագրով՝ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության աջակցությամբ:

Բրենդավորել մաթեւոսյանական Ահնիձորն ու մոռացությունից փրկել Խաչիկ Ղարաբեկյանի հայտնի արվեստանոցը: Ժամանակին այն Լոռվա բոհեմի հավաքատեղին էր: Լոռու բնաշխարհն ու արվեստը միավորելու մեծ ցանկությունը Մաթեւոսյանների ընտանիքին ոգեւորեց Խաչիկ Ղարաբեկյանի արվեստանոցը վերակառուցել ու դարձնել մի վայր, ուր կհամատեղվեն ստեղծագործական կյանքն ու հանգիստը:

● Հունիսի 15-ին՝ժամը 14:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Կոշկավոր կատուն» մերկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Եթե լրացել է անձի՝ կենսաթոշակի անցնելու տարիքը, ապա դիմում ներկայացնելու համար նա ի՞նչ պետք է անի եւ ո՞ւր ներկայանա:

Լաուրա Խաչատրյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կենսաթոշակ նշանակող մարմին:

Այսպես, տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարանիշը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը այլ անձի հանձնելու դեպքում ինչ չափով տուգանք է առաջադրվում:

Գրիշ Մարտիրոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Մարտիրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 198 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց մաքսային մարմնի թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100,000 դրամի չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Բրիտանացի երաժիշտ Ջոն Լենոնի կիթառը՝ «Օգնի՛ր» (Help!, 1965) ֆիլմից, Julien's Auctions աճուրդում վաճառվել է 2,85 միլիոն դոլարով:

The Beatles-ի անդամի կիթառն աճուրդային արժեքով դարձել է հինգերորդն աշխարհում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 10 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +21 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 19 + 21 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.6.2024**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*